

**Համաշխարհային Հայկական Կոնգրեսի
Գլխավոր Խորհրդի Բյուրոյի
հաշվետվությունը հիմնադիր
համագումարից հետո ընկած
Ժամանակահատվածում
(հոկտեմբեր 2003– մայիս 2006 թթ.)
Կատարած աշխատանքների մասին**

*Զեկուցող՝ Համաշխարհային
Հայկական Կոնգրեսի նախագահ
Արա Աբրամյան*

Հարգելի հայրենակիցներ
Տիկնայք և պարոնայք

Ի սրտե ողջունում եմ Համաշխարհային հայկական կոնգրեսի Գլխավոր Խորհրդի անդամներին, այսօրվա նիստի բոլոր մասնակիցներին և համոզմունք հայտնում, որ մեր աշխատանքը կլինի արգասաբեր, որ գործնական ու ստեղծագործական մթնոլորտում կքննարկենք կազմակերպության թե՛ կատարած աշխատանքները, և թե՛ առաջադրվող նոր խնդիրները:

Ընդամենը երկուսուկես տարի է անցել այն օրից, երբ Մոսկվայում իր աշխատանքն ավարտեց Համաշխարհային հայկական կոնգրեսի հիմնադիր համագումարը:

Երկուսուկես տարին պատմության համար ակնթարթ է ընդամենը: Այդ ակնթարթը սակայն լի ու լեցուն է հասարակական զարգացման նոր իրողություններով ու հակասություններով, մեր աշխատանքի նոր պայմաններով ու խնդիրներով: Այդ առումով այսօրվա նիստը մեծ խորհուրդ ունի: Այն պետք է ամփոփի այդ ժամանակահատվածում Բյուրոյի կատարած աշխատանքները, նախանշի մեր հետագա գործունեության գլխավոր ուղղությունները և միջոցները:

Յուրաքանչյուր մարդու, ազգի և պետության այսօր աննախադեպ, ինչպես երբևէ, մտահոգում է այն միտքը, թե ինչպիսի՞ն կլինի Երկիր մոլորակը նոր դարում, նոր հազարամյակում, հնարավոր կլինի՞ արդյոք խուսափել սոցիալական ցնցումներից և բնական աղետներից, ինչ՞ կարող ենք մենք հակադրել սպասվելիք նոր մարտահրավերներին:

Աշխարհում տեղի ունեցող նոր տեղաշարժերը և զարգացումները չեն կարող չշոշափել նաև Հայաստանի, Արցախի և համայն Սփյուռքի կենսական շահերը, և հայությունը չի կարող անտարբեր մնալ այդ նոր մարտահրավերների հանդեպ: 21-րդ դարը, առավել ևս փոքրաթիվ ժողովուրդների համար, անհրաժեշտաբար դարձել է նոր պայմաններին հարմարվելու և գոյատևման համար համախմբվելու ժամանակաշրջան: Ազգային գոյապահպանությունը, բնականաբար, մեր առջև դնում է ճիշտ ռազմավարություն մշակելու պահանջ, ռազմավարություն, որը կօգնի մեզ միավորելու մեր ժողովրդի, նրա յուրաքանչյուր հատվածի ջանքերը կենսագոյության ճանապարհին, հետ կանգնել մեր միասնությունն ու միաբանությունը ջլատող վարք ու բարքերից՝ հանուն հայ ժողովրդի կենսական շահերի պաշտպանության, նրա առջև ծառայած խնդիրների լուծման:

Ելակետ ունենալով այդ, Համաշխարհային հայկական կոնգրեսի հիմնադիր համագումարը կանոնադրորեն հռչակեց կազմակերպության գլխավոր նպատակը՝ նպաստել հայ ժողովրդի համախմբման և ջանքերի միավորման գործընթացի արագացմանը՝ հանուն համազգային շահերի պաշտպանության, հայության առջև ծառայած բազմաբնույթ խնդիրների լուծման: Համազգային առաջնահերթ խնդիրների շարքում համագումարն ընդգծեց, որ ստեղծված իրավիճակում

աշխարհով մեկ սփռված ողջ հայ ժողովրդի առջև ծառայած բացառիկ գերակայություն ունեցող խնդիրը Հայաստանի և հայոց պետականության պահպանումն ու ամրապնդումն է: Այդ ամենի համար առաջին հերթին անհրաժեշտ է ստեղծել ամուր տնտեսական հիմք, դինամիկ զարգացող էկոնոմիկա: Հարկ է նշել, որ վերջին տարիներին Հայաստանում իրավիճակն այս ուղղությամբ որոշ չափով բարելավվել է: Սակայն արմատական փոփոխությունների համար դեռ շատ բան պետք է արվի, քանի որ Հայաստանը դեռևս շարունակում է մնալ տնտեսական բազմաթիվ խնդիրներով ու դրանցից բխող հետևանքներով լի երկիր: Այդ խնդիրները լուծելու համար մեծ անելիքներ ունեն ոչ միայն հայաստանաբնակները, այլև համայն սփյուռքը:

Ահա թե ինչու Կոնգրեսը իր գործունեության մեջ, առաջին պլան է մղում Հայաստանի և Սփյուռքի գործնական մերձեցումը, մայր հայրենիքի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ կոնկրետ խնդիրների սահմանումն ու դրանց լուծման պայմանների ստեղծումը: Դրա վառ վկայությունն է Երևանում կազմակերպված հայ-ռուսական ներդրումային կոնֆերանսը, որին մասնակցեցին Ռուսաստանից ժամանած մեծ թվով գործարարներ: Կոնֆերանսին հաջորդեց Կոնգրեսի կողմից Երևանում 2004 թ. հոկտեմբերին, Արտաքին տնտեսական կապերի համառուսաստանյան ընկերակցության աջակցությամբ, հրավիրված Հայկական միջազգային առաջին տնտեսական ֆորումը, որի աշխատանքներին մասնակցում էին աշխարհի ավելի քան 20 երկրների, այդ թվում Ռուսաստանի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Իտալիայի, Հարավային Կորեայի, Բելգիայի, Ուկրաինայի և մի շարք այլ երկրների խոշոր, փոքր և միջին բիզնեսի շուրջ 400 ներկայացուցիչներ: Ֆորումը քննարկեց Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում Սփյուռքի ունեցած ներուժի արդյունավետ օգտագործման, համաաշխարհային տնտեսության և միջազգային բիզնես-կառույցներին Հայաստանի տնտեսության ինտեգրման մեխանիզմների մշակման և կոնկրետ բիզնես ծրագրերի ներդրման հետ առնչվող հարցերը: Առանձնահատուկ տեղ հատկացվեց ներդրումային քաղաքականության և գործարար ծրագրերի իրագործման համար Հայաստանի օրենսդրական դաշտի վիճակի և նրա կատարելագործմանն առնչվող խնդիրներին:

Ֆորումը կարևոր նշանակություն ունեցավ՝ որպես հայ գործարարների և միջազգային ֆինանսական կառույցների ջանքերի միավորման առաջին քայլ՝ ուղղված փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, տնտեսական նախագծերի իրականացմանը Հայաստանում: Ֆորումի ընթացքում քննարկվեցին նաև Համաաշխարհային հայկական կոնգրեսի բիզնես նախագծերը, գործարարների միջև կնքվեցին մի շարք պայմանագրեր:

Հանրահայտ է, որ առ այսօր բիզնեսի և տնտեսական զարգացման ոլորտում Հայաստանի և Սփյուռքի փոխհարաբերությունների կառուցողական պրակտիկան հիմնականում ներկայացված է հայկական գործարարների և համայնքների առանձին ներկայացուցիչների ներդրումային, հայրենասիրական և

բարեգործական անհատական օրինակներով: Որպես դրա ակնառու օրինակներ կարելի է նշել աղետի գոտու վերականգնմանը ցուցաբերած մասնակցությունը, Հայաստանի ավտոճանապարհների վերանորոգումը, Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ռազմավարական, Արցախի Հյուսիս-Հարավ ճանապարհների, Ստեփանակերտի սառնարանային տնտեսության կառուցման, փախստականներին ավելի քան 130 բնակարանների տրամադրման, Եղեգնաձորի մշակութային համալիրի, Հայաստանի և Արցախի դպրոցների համակարգչայնացման լայնամասշտաբ ծրագրի կենսագործման, նոր դպրոցների կառուցման և վերանորոգման, առևտրա-գործարարական կենտրոնների, բարեգործական ճաշարանների բացման փաստերը:

Այստեղ չենք ցանկանում թվարկել այն գործարարների անունները, որոնք ներդրումներ են կատարել հիշատակված և բազմաթիվ այլ գործերում, քանզի մեր հասարակայնությանը քաջ հայտնի են նրանք: Սակայն չեն կարող չընդգծել, որ այդ օրինակները մի կողմից վկայում են այն հսկայական ներուժի մասին, որն ունի Սփյուռքը, իսկ մյուս կողմից այն մասին, որ դեռևս բացակայում է Հայաստան-Սփյուռք տնտեսական հարաբերությունների համապատասխան կառուցվածքային համակարգող մեխանիզմը: Ահա թե ինչու Կոնգրեսը Միջազգային տնտեսական ֆորումի քննարկմանը ներկայացրեց նաև մեր կազմակերպության տնտեսական կառուցվածքի երկու նախագիծ, որոնց ներդրումը կարող է և պետք է նպաստի այդ խնդրի լուծմանը:

Առաջինը՝ Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի նախագիծն է, որը նախատեսվում է հիմնադրել Երևանում: Այդ կենտրոնի հիմնական նպատակը պետք է լինի նպաստել քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում Հայաստանի և Սփյուռքի զարգացման սահմանմանը, Հայաստանի պետական համապատասխան մարմինների, հասարակական և գործարար կառույցների հետ փոխգործության մեխանիզմների մշակումը, տվյալ խնդիրների վերաբերյալ արդեն առկա հետազոտությունների գնահատումը և դրանց լուծմանն ուղղված ծրագրերի ու նախագծերի մշակումը:

Երկրորդը՝ Հայկական ներդրումային հիմնադրամի ստեղծման նախագիծն է, որի նպատակն է ներդրումային արդյունավետ մեխանիզմի ստեղծումը՝ ի նպաստ Հայաստանի տնտեսության հաստատուն զարգացման ապահովման:

Այս նախագծերը ներկայումս գտնվում են փորձագիտական քննարկման փուլում և նախատեսվում է գործարկել առաջիկա տարիներին:

Կոնգրեսի աջակցությունը նպատակաուղղված է եղել նաև հայ մշակույթի, գիտության և կրթության զարգացմանը, ինչը մեր ժողովրդի համար չափազանց կարևոր են:

Ֆինանսական զգալի աջակցություն է ցույց տրվել Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիային: Այդ գումարները նպատակաուղղվել են Ակադեմիայի, նրա առանձին ինստիտուտներում աշխատանքային պայմանների

բարելավմանը, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպմանն ու դրանց արդյունքների հրատարակմանը, նոր սարքավորումների ձեռքբերմանը:

Համաշխարհային հայկական կոնգրեսը, արձագանքելով Ռուսաստանի հայերի միության նախաձեռնած «Հայաստանի և Արցախի դպրոցների համակարգչավորմանը՝ համազգային հոգածություն» շարժմանը, մեծ տեղ է հատկացնում ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այդ խնդրի լուծմանը:

Ներկա դրությամբ Հայաստանի և Արցախի ավելի քան 600 դպրոցներում, բուհերում և այլ ուսումնական հաստատություններում Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության ուժերով ստեղծվել են համակարգչային դասարաններ ու լսարաններ: Կոնգրեսը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հետ միասին համակարգչային ուսուցման կենտրոններ է ստեղծել հանրապետության մարզերում, որտեղ ընդգրկված են հաշմանդամ, ծնողազուրկ և ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաները: Այդ նպատակի համար հատկացվել է 400 համակարգիչ:

Չի մոռացվել նաև Ազգային բանակը: Հանրապետության զինվորական ստորաբաժանումներին է տրամադրվել 200 համակարգիչ:

Կոնգրեսը սկսել է զբաղվել նաև Սփյուռքի հայկական դպրոցների համակարգչավորման հարցով: Ընթացիկ տարում համակարգչային դասարան է բացվել Բրազիլիայի Սան-Պաուլու քաղաքի հայկական դպրոցում, աշխատանքներ են տարվում Բուենոս-Այրեսի հայկական դպրոցների համակարգչավորման ուղղությամբ:

Ինչպես վկայում են վերը շարադրված փաստերը, հայկական դպրոցների համակարգչավորման աշխարհագրությունը գնալով ընդլայնվում է, իր մեջ ներառելով նաև Սփյուռքը: Մինչդեռ չի խտանում այդ գործընթացի արագացման համար գումարներ ներդնող գործարարների շարքերը: Մեզ դեռևս չի հաջողվել այդ շարժման մեջ ներգրավելու թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի գործարարներին:

Ավելին ասեմ: Դպրոցների համակարգչայնացման հարցը իր ամբողջ սրությամբ դրվել է նաև Հայաստան-Սփյուռք երկրորդ խորհրդաժողովի կողմից, որը խնդիր է դրել մինչև 2005 թ. համակարգիչներով ապահովել Հայաստանի 1500 և Արցախի 200 դպրոց: Այդ ծրագիրը փաստորեն չի իրագործվել: Համոզված ենք, որ եթե այդ ծրագրի իրագործմանը մասնակցեին գեթ երկու տասնյակ հայ գործարար, ապա խնդիրը հնարավոր էր լուծել դեռևս 2004 թվականին: Ուրեմն մենք, Հայաստանի Հանրապետության կրթության մարմինների հետ միասին, մեր աշխատանքը պետք է կազմակերպենք այնպես, որպեսզի սփյուռքաբնակ հայ գործարարները երեսով շրջվեն դեպի պատմական հայրենիքի դպրոցի հոգսերը:

Դպրոցների համակարգչայնացման ուղղությամբ մեր աշխատանքը ամբողջական չի լինի, եթե չաջակցենք հանրապետության կրթության մարմիններին, դպրոցների համար համակարգչային ուսուցման կադրերի պատրաստման և վերապատրաստման, համապատասխան հանրամատչելի

գրականության ստեղծման ու հրատարակման գործում: Անհրաժեշտ է ընդլայնել նաև համակարգչային ուսուցման կենտրոնների ցանցը:

Հարգելի հայրենակիցներ:

Ինչպես տեսնում եք, մենք մեր ժողովրդի առջև դրված բազմաթիվ խնդիրներից առաջնահերթը համարել ենք աջակցությունը Հայաստանի սոցիալ-տնտեսական առաջընթաց զարգացմանը, Սփյուռքի հզոր ներուժի օգտագործմանը ի բարօրություն Հայաստանի: Մենք փորձեցինք այդ բնագավառում կոնգրեսի կատարած որոշ աշխատանքներ ներկայացնել ձեր ուշադրությանը: Այդ կարճ ժամանակահատվածում իրոք կատարվել է շոշափելի աշխատանք, որի մասին դուք տեղեկացաք ցուցադրված տեսաֆիլմից և ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ ձեզ տրամադրված «Հինգ տարվա ճանապարհ» հոբելյանական ամսագրից: Կարծում եմ, որ ավելի ճիշտ կլինի, որ մենք, այսօր ելակետ ընդունելով կատարվածը, քննարկենք մեր առաջիկա խնդիրները:

Ինչպես նշեցինք ի բարօրություն Հայաստանի ծավալված գործընթացին դեռևս մասնակցում են սփյուռքի առանձին անհատներ: Նրանցից ոմանք, իհարկե, մեծ գումարներ են ներդնում: Այսօր խնդիր է, որ մենք՝ Կոնգրեսի ղեկավարությունը, Բյուրոն և Գլխավոր Խորհուրդը դեռևս չենք կարողացել այդ գործում ապահովել համահայկական լիարժեք մասնակցությունը: Մեր կազմակերպության հիմնադիր համագումարում պատվիրակներից մեկը խոսելով այդ պրոբլեմի մասին, մեջ բերեց երջանկահիշատակ Կաթողիկոս Վազգեն I-ի խոսքը համահայկական հիմնադրամ ստեղծելու մասին: Այսօր ավելի քան տեղին է կրկնել այն՝ «Մեզ համար ավելի կարևոր է, որ մեկ միլիոն հայ ներդնի մեկական դոլար, քան մեկ հայ մեկ միլիոն»: Այստեղ խոսքը վերաբերում է առաջադրված խնդրո առարկայի նկատմամբ համազգային մոտեցմանը: Եթե սփյուռքաբնակ յուրաքանչյուր 10-րդ հաջողակ գործարար իր բիզնեսը իրականացնի նաև Հայաստանում, ապա Հայաստանը առաջիկա տաս տարվա ընթացքում կդառնա տնտեսապես հզոր երկիր, կբարձրանա բնակչության կենսամակարդակը:

Նման մոտեցման դեպքում մենք կնպաստենք ռազմավարական նշանակություն ունեցող մեկ հարցի լուծմանը ևս: Հայաստանում կստեղծվեն համապատասխան աշխատատեղեր, որով հնարավորություն կստեղծվի աշխատանք որոնելու նպատակով Հայաստանից հեռացած մեր հայրենակիցների վերադարձը կազմակերպելու համար: Եթե այս հարցում, առաջիկա 5-10 տարում, բեկում չկատարվի, ապա մեր հայրենակիցների հայրենադարձության խնդիրը տասնապատիկ անգամ կբարդանա: Դա կապված կլինի արդեն ոչ թե աշխատատեղերի առկայության կամ ֆինանսական միջոցների հետ, այլ արտերկրում աճող մատաղ սերնդի հոգեբանական վիճակի և էթնիկ ինքնագիտակցության հետ:

Այսօր սա է մեր գլխավոր խնդիրը և այս հարցում մեծ անելիքներ ունեն Կոնգրեսի Գլխավոր Խորհրդի անդամները: Ձեզնից յուրաքանչյուրն իր

բնակության երկրում պետք է համապատասխան աշխատանք տանի գործարարների հետ, շարժի ու խթանի նրանց հետաքրքրությունը Հայաստանի և Արցախի տնտեսական վերելքի նկատմամբ:

Այս տարվա սեպտեմբերին Երևանում տեղի կունենա Հայաստան-Սփյուռք 3-րդ խորհրդաժողովը: Դա կարևոր իրադարձություն է մեր համազգային կյանքում: Ընթացիկ տարում մեր ժողովուրդը համահայկական տարողությամբ նշելու է Հայաստանի անկախության 15-ամյակը: Սեպտեմբերին կայանալիք երրորդ խորհրդաժողովի նպատակն է միասնաբար քննարկել, վերլուծել, ամփոփել, գնահատել մեր անցած ճանապարհը, նպաստել արդի աշխարհաքաղաքական նոր իրողություններում մեր ժողովրդի առջև ծառայած խնդիրները միասնաբար լուծելու ուղիները: Կոնգրեսը ևս մշակել և ձեր քննարկմանն է ներկայացրել խորհրդաժողովի նախապատրաստման ուղղությամբ մեր անելիքները:

Հայաստանի կառավարության նախաձեռնությամբ մշակվել է Հայաստանի գյուղական համայնքների զարգացման ծրագիր: Ծրագրի ռազմավարական նպատակն է՝ սատարել Հայաստանի սահմանամերձ գյուղերի տնտեսական կայուն զարգացմանը, գյուղական վայրերում աղքատության վերացման գործընթացի արագացմանը, ինչը կամրապնդի հանրապետության աշխարհաքաղաքական ու տնտեսական անվտանգությունը: Դա լուրջ խնդիր է, համազգային կարևորության խնդիր և դրա լուծման բեռը իր վրա պետք է վերցնի նաև Համաշխարհային հայկական կոնգրեսը: Ես առաջիկայում հանդիպում պետք է ունենամ Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հետ, և ավելի կհստակեցնենք այդ ծրագրում մեր կազմակերպության անելիքները: Գործունեության լայն ասպարեզ է բացվում Կոնգրեսի Գլխավոր Խորհրդի անդամների համար: Այստեղ է, որ մենք պետք է նպաստենք համազգային մասնակցության ապահովմանը այդ ծրագրի իրագործման հարցում:

Այսօր համայն հայության միջավայրում թևածում է մի կարգախոս՝ «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է»: Միանգամայն ճիշտ կարգախոս է: Եթե Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է, ապա Հայաստանի պրոբլեմների լուծմանը մասնակցելը բոլոր հայերի պարտքն է: Ուստի «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է» կարգախոսով հայ պետականության վերելքին, նրա ամրապնդմանն ու զարգացմանը ծառայելը պետք է դառնա յուրաքանչյուր հայի կյանքի հիմնական ու նվիրական կոչումը:

Հայրենիքի հետ Սփյուռքի կապերի ամրապնդումն ու զարգացումը մնում է մեր համազգային կյանքի օրակարգի կարևորագույն խնդիրներից մեկը: Վերջին տարիներին Հայաստանի և Սփյուռքի հարաբերությունները դադարում են բացառապես զգացմունքային-հայրենաբաղձական լինելուց և ձեռք են բերում գործընկերության և փոխշահավետ համագործակցության բնույթ: Դրա մասին են վկայում Հայաստան-Սփյուռք պարբերաբար անցկացվող խորհրդաժողովները:

Հայաստան - Սփյուռք հարաբերությունները որակական նոր մակարդակ են ձեռք բերում ներկայումս, երբ հաղթահարված է երկքաղաքացիության բացառման

սահմանադրական արգելքը՝ հնարավորություն ընձեռնելով յուրաքանչյուր հայի լիարժեք ներկայություն հաստատել իր հայրենիքում:

Բարի ավանդույթ է դարձել Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության օրերի անցկացումը Հայաստանում և Արցախում: Այդ կարևոր միջոցառումը սկսվել է Ռուսաստանի հայերի միության կողմից դեռևս 2000 թվականին, սակայն Համաշխարհային հայկական կոնգրեսի հիմնադրումից հետո վերանվանվել է «Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության օրերը Հայաստանում և Արցախում»՝ ձեռք բերելով նոր շնչառություն և նոր իմաստ: Այդ ծրագրին արդեն մասնակցում է ոչ միայն Ռուսաստանի հայկական համայնքը, այլև ԱՊՀ երկրների և հեռավոր Սփյուռքի, ինչպես նաև՝ տարբեր ազգությունների ավելի քան 500 ներկայացուցիչ: Այս տարվա օրերը կանցկացվեն սեպտեմբերին՝ Հայաստան-Սփյուռք 3-րդ խորհրդաժողովի շրջանակներում:

Ավանդական դարձած այդ միջոցառումները նպաստում են Հայաստան-Սփյուռք, Սփյուռք-Սփյուռք համակարգային փոխազդեցության նոր ձևերի որոնմանն ու ներդրմանը:

Փորձը ցույց է տալիս, որ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման գործում վճռորոշ դեր կարող է խաղալ ստեղծագործական մտավորականությունը: Հայաստանում մտավորականության ներկայացուցիչները միավորված են ստեղծագործական միություններում և նրանց մեծ մասը Համաշխարհային հայկական կոնգրեսի հիմնադիր անդամն է: Նրանք կարող են և պետք է միավորեն, համախմբեն Սփյուռքի մտավորականությանը: Այս առումով դրվատելի և ուսանելի փորձ ունի Հայաստանի գրողների միությունը: Ահավասիկ՝ 2002 թվականին պատմության մեջ առաջին անգամ Երևանում հրավիրվեց գրողների առաջին համագային համաժողովը, որին մասնակցեց 20 երկրների շուրջ 60 պատվիրակներ, երկրորդ համաժողովը՝ 2004-ին՝ ընդգրկելով նաև Արցախը, այս տարի, համագործակցելով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հետ՝ երրորդ համաժողովը՝ Բեյրութում:

Գրողների գրական-հրատարակչական-սոցիալական հիմնախնդիրների լուծմանն է ծառայում համահայկական գրական հիմնադրամը, որին իր շոշափելի ֆինանսական աջակցությունն է բերել Համաշխարհային հայկական կոնգրեսը:

Երկու գրականությունները զարգացման մեկ հունով ծավալելու, բաժանարար պատնեշները վերացնելու մտահոգությամբ իրագործվում են նաև մի շարք այլ ծրագրեր:

Կարծում ենք, որ գրողների միության օրինակով նույն բանը կարող են անել նաև մյուս ստեղծագործական միությունները, ինչու չէ, նաև գրական մտավորականության ներկայացուցիչները:

Համաշխարհային հայկական կոնգրեսը կօժանդակի այն ստեղծագործական միություններին, գիտական կազմակերպություններին, որոնք կփորձեն միավորել ու համախմբել իրենց սփյուռքաբնակ գործընկերներին:

Դրանք կարող են դառնալ ճյուղային կառույցներ և իրենց տեղը գտնել Համաշխարհային հայկական կոնգրեսի կառուցվածքում: Այս խնդիրը օրվա հրամայականներից է և պետք դառնա Կոնգրեսի Գլխավոր Խորհրդի Բյուրոյի մտահոգության առարկան և:

Եթե այդ շարժումը համապատասխան ծավալ ստանա, ապա Կոնգրեսը կարող է Երևանում հիմնադրել հրատարակչություն, որը, իհարկե, որպես բիզնես կառույց կգբաղվի Հայաստանի և Սփյուռքի գրականության և արվեստի լավագույն արժեքները օտար լեզվով թարգմանելու, հրատարակելու և արտերկրերում իրացնելու գործով: Դրանով մենք նախ կքարոզենք մեր գրականության և արվեստի լավագույն արժեքները, երկրորդը՝ Սփյուռքի երիտասարդությանը հաղորդակից կդարձնենք այդ արժեքներին, ինչը կնպաստի նրանց էթնիկ ինքնագիտակցության պահպանմանը և երրորդը՝ այդ գործարքից ստացված եկամուտը կծառայի Կոնգրեսի գործունեության ընդլայնմանը:

Առանձնահատուկ հոգածության բնագավառ պետք է դառնան հայոց աշխարհասփյուռ պատմաճարտարապետական հուշարձանները, նրանց պահպանության ու քարոզման խնդիրները:

Կոնգրեսի կարևորագույն և առաջնահերթ խնդիրներից է աջակցությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, նրա հետևանքների վերացման գործընթացներին: Այս ուղղությամբ Կոնգրեսի Գլխավոր Խորհրդի Բյուրոյի գործունեությունը շոշափելի է: Բյուրոն, Մոսկվայի Միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտի հետ միասին, 2004թ. մայիսին Երևանում անցկացրեց «Ցեղասպանության գործունը՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում» երկօրյա միջազգային գիտագործնական կոնֆերանս՝ աշխարհի 10 երկրների նշանավոր մասնագետների մասնակցությամբ: Կոնֆերանսը հաստատեց ցեղասպանության խնդիրների վերաբերյալ Համաշխարհային հայկական կոնգրեսի 2004-2010 թվականների գործունեության ծրագիրը և մեծ Եղեռնի 90-րդ տարելիցին նվիրված միջոցառումների պլանը:

Կոնֆերանսի գլխավոր արդյունքներից մեկն այն էր, որ ձևավորվեց Հայոց ցեղասպանության հրատապ հիմնախնդիրներն ուսումնասիրող մշտական գործող փորձագիտական հանձնախումբ, որի կազմում ընդգրկվեցին ոչ միայն հայ, այլև տարբեր երկրների հանրաճանաչ և այդ բնագավառում համբավ ունեցող մասնագետներ:

Այսօր կարելի է վստահորեն ասել, որ այդ հանձնախումբը, Հայոց ցեղասպանության բնագավառի հանրահայտ գիտնական Յուրի Բարսեղովի ղեկավարությամբ բարձր պատասխանատվությամբ է կատարում իր առջև դրված խնդիրները:

Հանձնախումբը իր երկրորդ նիստը գումարել է 2005 թ. ապրիլի 25-26-ին Երևանում: Վաղը փորձագիտական հանձնախումբը կսկսի իր եռօրյա երրորդ նստաշրջանը, որի քննարկման նյութը կհանդիսանա ՄԱԿ-ի Միջազգային

դատարանի և այլ միջազգային դատական մարմինների շրջանակներում Հայոց Ցեղասպանության հիմնահարցի լուծման հնարավորությունների և Ցեղասպանության գոհերի իրավունքների պաշտպանության կազմակերպչական ասպեկտները:

Փորձագիտական հանձնախումբը, Մոսկվայի Միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտի հետ համատեղ, 2004 թ. սկսել է հրատարակել «Լրատու» հանդեսը, որի էջերում հիմնականում լուսաբանվում են հանձնախմբի անդամների կատարած հետազոտական աշխատանքները:

Կոնգրեսի Բյուրոն զգալի աշխատանք է կատարել նաև Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի կապակցությամբ: Երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հրատարակվել է «Հիշողություն ընդդեմ մոռացության» նկարազարդ ավբոնը, որը դուք արդեն ունեք ձեր ձեռքի տակ և կարող եք ինքներդ գնահատել այն: Միայն կարող եմ ավելացնել, որ ընթերցողների կողմից այն արժանացել է բարձր գնահատականի և ստացել նոր անուն՝ նկարազարդ փոքր հանրագիտարան Հայոց ցեղասպանության մասին: Հրատարակվել են նաև տասնյակ գրքեր ցեղասպանությանն առնչվող պրոբլեմների վերաբերյալ: Կոնգրեսի ֆինանսական աջակցությամբ հրատարակվել է Յուրի Բարսեղովի «Հայերի ցեղասպանությունը. Թուրքիայի պատասխանատվությունն և միջազգային հանրության պարտավորությունները» երեք հատորը:

Անցյալ տարի Կոնգրեսը հայտարարեց Մեծ Եղեռնի 90-ամյակին նվիրված «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով լավագույն գրական ստեղծագործական աշխատանքի միջազգային մրցույթ՝ Սփյուռքի, Հայաստանի և Արցախի դպրոցների բարձր դասարանցիների և ուսանողների համար: Մրցույթը դարձել է ավանդական և կանցկացվի յուրաքանչյուր տարի:

Ցեղասպանության, նրա հետևանքների վերացման, մեր ժողովրդի հսկայածավալ հատվածի կորսված իրավունքների վերականգնման վերաբերյալ մեկ խնդրի վրա ևս կցանկանայինք հրավիրել ձեր ուշադրությունը: Ներկայումս օրվա հրամայական է դարձել արևմտահայերի լիազոր ներկայացուցչական մարմինների հիմնումը, որը կարող է որակական նոր մակարդակի հասցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, նրա հետևանքների վերացման գործընթացը: Նման մարմիններ ստեղծելու խնդիրը կարող է լուծվել միայն արևմտահայության ներկայացուցիչների համագումարում: Ուստի, առաջին հերթին, պետք է լուծվի համագումար հրավիրելու խնդիրը: Դրա համար անհրաժեշտ կլինի ձևավորել համագումարը նախապատրաստող Կազմկոմիտե: Առաջադրված այդ կարևոր նպատակի իրականացման հարցում Կոնգրեսը, նրա ղեկավարությունը, պատրաստ են համագործակցելու բոլոր այն համայնքների, հասարակական և քաղաքական կազմակերպությունների, անհատների հետ, որոնք շահագրգիռ մոտեցում կունենան խնդրո առարկայի նկատմամբ:

Համազգային կարևորության խնդիր է մնում Արցախի հարցը: Այստեղ վճռվում է ոչ թե հայության մի հատվածի, այլ համայն հայության հետագա

առաջըթացի և զարգացման հարցը: Մեր կազմակերպությունը այսուհետ ևս շարունակելու է իր պայքարը Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության համար՝ օգտագործելով միջազգային իրավունքի ընձեռած հնարավորությունները: Սփյուռքը մեծ ներուժ և հնարավորություններ ունի Արցախի հարցի լուծման նկատմամբ արտերկրներում հասարակական կարծիքի բարենպաստ մթնոլորտ ստեղծելու գործում, որը կարող է հսկայական ազդեցություն թողնել հիմնահարցով զբաղվող միջազգային կառույցների վրա:

Մենք դեռևս լուրջ անելիքներ ունենք սփյուռքաբնակ հայերի շահերի պաշտպանության գործում, նկատի ունենք թե սոցիալական, թե կրթամշակութային և թե իրավական շահերը: Այստեղ ևս անփոխարինելի է միաբանության ու միասնության դերը:

Սփյուռքաբնակ հայության շահերի պաշտպանության հարցում շոշափելի են Համաշխարհային հայկական կոնգրեսի հիմնադիր անդամ Ռուսաստանի հայերի միության ձեռքբերումները: Առանց վերապահման կարելի է ասել, որ ներկայումս չկա ռուսաստանաբնակ հայության հետ առնչվող, նրանց շահերը շոշափող որևէ հարց, որը դուրս մնա միության ղեկավարության կամ տարածքային կազմակերպությունների տեսադաշտից:

Կոնգրեսի Գլխավոր Խորհրդի, նրա Բյուրոյի, հիմնադիր անդամ հանդիսացող կազմակերպությունների խնդիրն է աշխատանքը կազմակերպել այնպես, որ սփյուռքաբնակ, ինչու չէ, նաև հայաստանաբնակ յուրաքանչյուր հայ մարդ զգա մեր կազմակերպության տաք շունչը: Հակառակ դեպքում մեր կազմակերպությունը մասայականություն չի վայելի մեր հայրենակիցների միջավայրում:

Կոնգրեսի Բյուրոն որոշակի աշխատանք է կատարել նաև կազմակերպության կանոնադրական պահանջներից մեկի՝ հանուն խաղաղության և համամարդկային արժեքների պաշտպանության Կոնգրեսի անդամների ջանքերի միավորման ուղղությամբ: Կազմակերպվել են մի շարք միջոցառումներ: Հիշատակման է արժանի 2004 թ. Համաշխարհային հայկական կոնգրեսի Հայաստանում անցկացված օրերի շրջանակներում կազմակերպված «Քաղաքակրթությունների երկխոսություն» միջոցառումը, որին մասնակցեցին տասն ազգությունների երիտասարդության ներկայացուցիչներ: Այս միջոցառումը կազմակերպվել էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ: Ղա պայմանավորված էր երկու կազմակերպությունների համահունչ նպատակներով, հատկապես, խաղաղության և համամարդկային արժեքների պաշտպանության, քաղաքակրթությունների միջև երկխոսության զարգացման համատեքստում:

Վաղը, այս նույն դահլիճում, իր աշխատանքները կսկսի Կոնգրեսի, Հայաստանի «Քաղաքակրթությունների երկխոսություն» ազգային կենտրոնի կազմակերպված միջազգային կոնֆերանսը, որին կմասնակցի նաև Ռուսաստանի «Ազգային փառքի կենտրոն»-ը: Կոնֆերանսը կքննարկի «Կովկասն առանց հակամարտության և ահաբեկչության. Քաղաքակրթությունների երկխոսություն

կովկասյան խաչմերուկում» թեման: Նրա աշխատանքին կմասնակցեն Հայաստանի, Ռուսաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Պարսկաստանի և Եվրոպական մի շարք երկրների փորձագետներ, ինչպես նաև ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կոնֆերանսի նպատակն է Կովկասի ներկա բարդ պրոբլեմների լուծմանը մասնակից դարձնել հասարակության ներկայացուցիչներին, ինչը կնպաստի հակամարտությունները խաղաղ ճանապարհով, բանակցությունների միջոցով լուծման գործընթացներին:

Անհրաժեշտ ենք համարում մի կարևոր հարցի վրա ևս հրավիրելու նիստի մասնակիցների ուշադրությունը: Եկել է ժամանակը, որ մեր հարաբերությունները երիտասարդության հետ բարձրացնենք նոր մակարդակի, նրանց ակտիվորեն ներգրավենք կոնգրեսի գործունեության մեջ:

Մենք ապագայի կազմակերպություն ենք, իսկ ապագան պատկանում է երիտասարդությանը: Ուստի մենք առանց երիտասարդություն հեռու գնալ չենք կարող: Այսօր օբյեկտիվ անհրաժեշտություն է դարձել մեր կազմակերպության երիտասարդական թևի կազմավորման խնդիրը: Կոնգրեսի ղեկավարությունը վերջին մեկ տարվա ընթացքում փորձեր է անում երիտասարդության հետ տարվող աշխատանքները աշխուժացնելու ուղղությամբ: Այդ խնդիրների կապակցությամբ բանակցություններ են տարվում Հայաստանի, Իրանի, Ղարաբաղի, Հայաստանի բուհերում սովորող սփյուռքահայ ուսանողների միացյալ կազմակերպության (այն իր շարքերում միավորում է 32 երկրների ուսանողների) հետ: Այդ կազմակերպությունների ներկայացուցիչները հրավիրվել և այսօր մասնակցում են մեր նիստի աշխատանքներին: Ես երեք առանձին հանդիպում եմ ունեցել նրանց հետ և քննարկել ենք մեզ հետաքրքրող հարցերը:

Ո՞րն է այսօր մեր խնդիրը: Մենք նպատակ ենք հետապնդում ձևավորել հայկական երիտասարդական կազմակերպությունները միավորող հասարակական կազմակերպություն, որը կգրանցվի Հայաստանում, որպես միջազգային կազմակերպություն՝ իրավաբանական անձի կարգավիճակով: Այդ կազմակերպությունը կարող է անդամագրվել Համաշխարհային հայկական կոնգրեսին և կազմել նրա երիտասարդական թևը:

Կոնգրեսի ստեղծման և կայացման գործում առանձնահատուկ է հայ եկեղեցու դերը: Հայ եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը միշտ եղել և մնում է համազգային կյանքի հոգևոր կենտրոն: Եկեղեցին, ողջունելով Համաշխարհային հայկական կազմակերպության ստեղծման գաղափարը, մեծ աջակցություն է ցույց տվել նրա իրագործմանը: Համաշխարհային կառույցի ստեղծման գործընթացին մեծ օժանդակություն է ցուցաբերել Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսությունը: Այսօր էլ եկեղեցին ամենուր օժանդակում է Կոնգրեսի կայացման գործընթացին: Մենք երախտագիտությամբ ենք ընդունում հայ եկեղեցու աջակցությունը և այսուհետև ևս նրա հայրապետական օրհնության հույսն ունենք:

Այժմ անդրադառնանք Համաշխարհային հայկական կոնգրեսի գործունեության հետ կապված մի կարևոր հարցի ևս: Դա վերաբերվում է կազմակերպության կազմակերպչական կառուցվածքի ամրապնդմանը: Այստեղ մեր անելիքները ավելի շատ են, քան կատարվածը: Մենք խիստ թերացել ենք կազմակերպության մասնաճյուղերի ձևավորման հարցում, մոռանալով մի պարզ ճշմարտություն, որ ցանկացած կազմակերպություն ուժեղ է իր ներքին կառույցներով: Առ այսօր, ցավոք, մենք մասնաճյուղ ունենք միայն Հայաստանում:

Աշխարհով մեկ սփռված հայությանը համազգային շահերի շուրջ համախմբել ցանկացող կազմակերպությունը պետք է իր ստորաբաժանումներն ունենա հայաշատ տարածաշրջաններում: Այլ կերպ դժվար թե հնարավոր լինի մեկ կենտրոնից կառավարել սկսած գործընթացը: Ուստի այսօր ժամանակը հրամայաբար պահանջում է, որպեսզի մենք առաջիկայում լուրջ բեկում մտցնենք այդ բնագավառում: Մասնաճյուղեր պետք է ստեղծվեն Եվրոպայում, Հարավային և Հյուսիսային Ամերիկայում, Մերձավոր արևելքում, ԱՊՀ երկրներում: Սա լուրջ խնդիր է, որով պետք է զբաղվեն նաև կազմակերպության Գլխավոր Խորհրդի անդամները: Առայժմ տեղերից գրեթե ոչ մի կոնկրետ առաջարկություն չենք ստացել մասնաճյուղ ստեղծելու մասին: Ցանկալի է, որ այսօր, Գլխավոր Խորհրդի անդամներն, իրենց վերաբերմունքն արտահայտեն մասնաճյուղեր ստեղծելու հարցի շուրջ:

Կազմակերպչական կառուցվածքի հետ առնչվող մյուս կարևոր հարցը՝ հանձնաժողովների ստեղծելու խնդիրն է: Կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է նաև մասնագիտական մոտեցում: Այդ խնդիրները կարող են լուծվել հանձնաժողովների միջոցով: Հասարակական կազմակերպությունների գործունեության մեջ դա ընդունված պրակտիկա է: Մենք պետք է ունենանք այնպիսի հանձնաժողովներ, ինչպիսին Ցեղասպանության հարցերով զբաղվող փորձագետների հանձնաժողովն է: Կազմակերպության Բյուրոն ձեր քննարկմանն է ներկայացրել առաջարկվող հանձնաժողովների ցանկը: Ակնկալում ենք ձեր շահագրգիռ վերաբերմունքը այդ հարցի վերաբերյալ ևս:

Այսօր չեմ կարող կանգ չառնել սկզբունքային նշանակություն ունեցող մի կարևոր հարցի վրա ևս: Դա Համաշխարհային հայկական կոնգրեսի և Հայաստանի Հանրապետության ղեկավարության փոխհարաբերությունների հարցն է: Անվեհապահորեն կարելի է ասել, որ այդ փոխհարաբերությունների մեջ դրական տեղաշարժեր նկատվում են: Մենք հաճախակի հանդիպումներ ենք ունենում Հայաստանի Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի հետ և միասին քննարկում Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր: Սակայն ճշմարտությունը պահանջում է ասել, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները, հատկապես նախարարությունները, դեռևս պասիվ վերաբերմունք են դրսևորում Համաշխարհային հայկական կոնգրեսի

գործունեության նկատմամբ, որի պատճառով էլ ստեղծագործական համագործակցության լայն դաշտ չի ստեղծվել Կոնգրեսի և նրանց միջև, ինչը բնականաբար խոչընդոտում է համատեղ արդյունավետ աշխատանքին:

Ասեմ ավելին: Հանրապետության իշխանությունները երբեմն չեն ուզում նկատել Կոնգրեսի ծավալված գործունեությունը թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում: Իսկ հանրապետության մասսայական ինֆորմացիայի մի շարք միջոցներ ելակետ ընդունելով իշխանությունների այդ վերաբերմունքը, կամ միգուցե նրանց դուր գալու միտումով, փորձում են ծուռ հայլու մեջ ներկայացնել Կոնգրեսի գործունեությունը:

Մենք գիտակցում և մեկ անգամ ևս ընդգծում ենք Հայաստանի Հանրապետության գերագույն դերն ու պատասխանատվությունը հայության համախմբման գործում: Բայց միաժամանակ գիտակցում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը հանձնառու է իր բոլոր կարելիություններով ապահովել այն անհրաժեշտ պայմանները, որոնք յուրաքանչյուր հայի հնարավորություն կընձեռնեն լիարժեք մասնակցությունը բերել համազգային խնդիրների լուծմանը:

Հայության բոլոր հատվածները սերտորեն շաղկապված են և մեր խնդիրների լուծումը պայմանավորված է Համազգայիօն ներդաշնակ և միասնական գործունեությամբ:

Կոնգրեսի կարճատև գոյության պատմությունն ունի տպավորիչ էջեր, որոնք վառ կերպով արտացոլում են Սփյուռքի հետ Հայաստանի ղեկավարության համատեղ գործունեության արդյունավետությունը: Ինչպես գիտեք, վեց հայ օդաչուներ Հասարակածային Գվինեայում դատապարտվել էին երկարաժամկետ ազատազրկման (14-ից - 24 տարի) պետական հեղաշրջում կատարելու հիմնազուրկ մեղադրանքով: 457 օր նրանք շղթայված անցկացրեցին բանտում:

Այդ ամբողջ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության ղեկավարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի ղեկավարության պայքարը՝ Հայաստանի քաղաքացիների իրավական շահերի պաշտպանության համար չի դադարել: Իսկ այդ համատեղ պայքարի արդյունքի մասին արդեն դուք գիտեք: Ես մի առիթով ասել և այսօր էլ ուզում եմ կրկնել, որ եթե այդ պայքարի շղթայից դուրս մնար թեկուզ մեկ օղակ, ապա այս գործը հաջողությամբ չէր պսակվի:

Նման ներդաշնակ միասնությամբ, մենք պետք է ապահովենք մեր համազգային բոլոր խնդիրների՝ Հայաստանի տնտեսական զարգացման և պետության ամրապնդման, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և նրա հետևանքների վերացման, Արցախի հարցի արդարացի կարգավորման խնդիրների լուծումը: Նման միասնությամբ ու միաբանությամբ, համատեղ ջանքերով պետք է դիմակայենք նոր դարի մարտահրավերներին:

Սիրելի հայրենակիցներ,

Վերջացնելով խոսքս, կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել արդեն մոտ երեք տարվա վաղեմություն ունեցող մի հետաքրքիր իրողության վրա:

Ինչպես գիտեք, կոնգրեսի հիմնադիր համագումարը նախապատրաստող Կազմկոմիտեն մշակել էր կազմակերպության ստեղծման հայեցակարգը և ուղարկել հայկական համայնքների, հասարակական և քաղաքական կազմակերպությունների, գիտական, ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչների քննարկմանը, ակնկալելով նրանց կարծիքը հայկական համաշխարհային կազմակերպության ստեղծելու գաղափարի վերաբերյալ: Պետք է ասեն, որ շատ շատերը ողջունեցին այդ գաղափարը և շեշտեցին դրա անհրաժեշտությունը և խիստ արդիականությունը: Այդ գաղափարի իրականացմանն օգտակար լինելու ձգտումով շատերը, շահագրգիռ մոտեցում ցուցաբերելով, հայտնեցին իրենց նկատառումները և կոնկրետ առաջարկությունները հայեցակարգի վերաբերյալ, որոնք օգտակար եղան կազմակերպության ստեղծման և նրա հետագա գործունեության համար:

Կարծում եմ միանգամայն տեղին է, որ այսօր, մեր կազմակերպության գոյության երրորդ տարվա բարձրունքից, գոհունակություն և շնորհակալություն հայտնենք նրանց, ովքեր իրենց բարի խորհուրդներով, կոնկրետ առաջարկություններով օգնեցին մեզ ստեղծելու Համաշխարհային հայկական կոնգրեսը և այսօր էլ սատարում են նրա կայացման գործընթացը:

Միաժամանակ ուզում եմ նշել, որ այդ օրերին գտնվեցին մարդիկ, դրանց թվում նաև անվանի գիտնականներ, հասարակական, քաղաքական գործիչներ, որոնք թերահավատ վերաբերմունք ցուցաբերեցին այդ գաղափարի նկատմամբ: Նրանցից ոմանք ներկայացված գաղափարը անվանեցին «ավելորդ», «անիրատեսական», «սխալ», «անիմաստ» և այլն:

Այսօր անվերապահորեն կարելի է արձանագրել, որ անգամ այն մարդիկ, ովքեր թերահավատորեն էին տրամադրված այդ նոր կառույցի ստեղծման նկատմամբ կամ ոմանք գտնում էին, որ «Կոնգրեսի ստեղծումը իսկզբանե դատապարտված է ձախողման», նրանք ևս ներկայումս մեզ հետ կիսում են այն փաստը, որ Համաշխարհային հայկական կոնգրեսը իրողություն է արդեն և իր գործունեությամբ դուրս է եկել լայն ճանապարհ, դարձել դինամիկ զարգացող, մեր ժողովրդի և մեր ազգային պետականության կայացմանն ու ամրապնդմանը միտված կազմակերպություն: